


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ФУНДАМЕНТАЛЬНАЯ НАУЧНАЯ БИБЛИОТЕКА

ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ
ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

ЛЕВОН ОГАНЕСОВИЧ
АХВЕРДЯН

Ե Ր Ե Վ Ա Ն





НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ФУНДАМЕНТАЛЬНАЯ НАУЧНАЯ БИБЛИОТЕКА
МАТЕРИАЛЫ К БИОБИБЛИОГРАФИИ УЧЕНЫХ АРМЕНИИ
№ 52

ЛЕВОН ОГАНЕСОВИЧ
АХВЕРДЯН

Вступительная статья Х. Е. САМВЕЛЯНА
Библиография составлена Р. А. БАБАДЖАНЯН

ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА
ЕРЕВАН 1996

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ**

**ՖԻԼՈՍՓԱՄԵՆՏԱԼ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ
ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ**

№ 52

ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

*Ներածականը՝ Խ. Ն. ՍԱՄՎԵԼՅԱՆԻ
Մատենագիտությունը կազմել է Ռ. Ա. ԲԱԲԱՋԱՆՅԱՆԸ*

**ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
Ե Ր Ե Վ Ա Ն**

1 9 9 6

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության և բանասիրության
բաժանմունքի բյուրոյի հրաշխավորությամբ և ՀՀ ԳԱԱ ֆունդամենտալ
գիտական գրադարանի գիտական խորհրդի որոշմամբ

Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Կ Ո Լ Ե Գ Ի Ա

Ս. Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆ (նախագահ), Հ. Գ. ԲԱԿԼԱՎԱԶՅԱՆ,
Գ. Բ. ԳԱՐԻԲԺՅԱՆՅԱՆ, Ռ. Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, Վ. Ս. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Պատասխանատու խմբագիր՝ Խ. Ե. ՍԱՄՎԵԼՅԱՆ

Печатается по рекомендации бюро Отделения философии и
филологии НАН РА и по решению ученого совета фундаментальной
научной библиотеки НАН РА

Редакционная коллегия

С. А. ВАРДАНЫАН (председатель), О. Г. БАКЛАВАДЖЯН,
Г. Б. ГАРИБДЖАНЫАН, Р. М. МАРТИРОСЯН, В. С. НАЛБАНДЯН

Ответственный редактор Х. Е. САМВЕЛЯН

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՍ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ
ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՀԱԽՎԵՐԴՅԱՆԻ
ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԹՎԵՐԸ

- Լեոն Հովհաննեսի Հախվերդյանը ծնվել է 1924 թ. դեկտեմբերի 26-ին Ղարաբլիխատում (Վանաձոր), ղինվորականի բնտանիքում:
1928 թ. բնտանիքի հետ տեղափոխվել է Երևան:
1941 թ. ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը:
1946 թ. տարգեհատրվել է «1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում աշխատանքային արիության համար» մեդալով:
1949 թ. ավարտել է Երևանի թատերական ինստիտուտի թատերագիտական ֆակուլտետը:
1949—1953 թթ. «Գրական թերթի» քննադատության բաժնի վարիչ:
1950-ից Հայաստանի Գրողների միության անդամ:
1951-ից Հայաստանի Թատերական ղնկերության անդամ:
1953—1955 թթ. Հայպետհրատի խմբագիր:
1955-ից «Սովետական արվեստ» ամսագրի խմբագրական կոլեկտիվի անդամ:
1955—1959 թթ. «Սովետական արվեստ» ամսագրի պատասխանատու քարտուղար:
1956 թ. շնորհվել է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական առտիճան (գիտերտացիան՝ «Մեր օրերի հալ դրամատուրգիան» գիրքը):
1956—1958 թթ. Հայաստանի ԳԱ արվեստների տեսության և պատմության սեկտորի գիտական աշխատակից:
1965-ից Հայաստանի ԳԱ արվեստի ինստիտուտի թատրոնի բաժնի վարիչ:
1967 թ. շնորհվել է բանասիրական գիտությունների դոկտորի գիտական առտիճան (գիտերտացիան՝ «Թումանյանի աշխարհը» գիրքը):
1968—1969 թթ. Հովհ. Թումանյանի ծննդյան 100-ամյակն անցկացնող կառավարական հոբելյանական հանձնաժողովի քարտուղար:

- 1972 թ. արժանացել է Հայաստանի արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչման:
- 1975 թ. պարգևատրվել է Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության պատվոգրով՝ ծննդյան 50-ամյակի առթիվ:
- Ավ. Իսահակյանի ծննդյան 100-ամյակն անցկացնող կառավարական հոբելյանական հանձնաժողովի քարտուղար:
- 1980-ից Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի դասախոս:
- 1981 թ. հրավիրվել է Բեյրութի Հայկազյան կոլեջ՝ իրրե հայ գրականության դասախոս:
- 1983 թ. արժանացել է Հայաստանի պետական մրցանակի («Հայ Սատրոնի պատմություն. 1901—1920» գրքի համար):
- 1987-ից Հայաստանի ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրեն:
- 1988 թ. Իտալիայում կայացած հայ արվեստի հինգերորդ միջազգային գիտաժողովի պատվիրակության ղեկավարի տեղակալ:
- 1989 թ. արժանացել է Հայաստանի Գրողների միության Միք. Նալբանդյանի անվան մրցանակի («Պարույր» գրքի համար):
- Թբիլիսիում կայացած հայ-վրացական մշակութային կոնֆերանսի հայկական պատվիրակության ղեկավար:
- 1990 թ. Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ:
- գործուղվել է ԱՄՆ Հայաստանի ԳԱ կողմից՝ «Այրեքս» ուսումնասիրության և փոխանակության միջազգային գրասենյակի հրավերով:
- 1994 թ. Հովհ. Թումանյանի և Կոմիտասի ծննդյան 125-ամյակն անցկացնող կառավարական հանձնաժողովի անդամ:
- 1994-ից Հայաստանի ԳԱԱ հումանիտար գիտությունների բաժանմունքի բյուրոյի անդամ:
- 1994-ին վերընտրվել է Հայաստանի Գրողների միության վարչության անդամ:
- 1995 թ. ՀՀ լեզվի տեսչության հայոց լեզվի բարձրագույն խորհրդի անդամ:
- 1996 թ. Հայաստանի ԳԱԱ ակադեմիկոս:

— — —

ԿՅԱՆՔԻ, ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Լևոն Հախվերդյանն իր առաջին հոդվածը հրապարակել է 1946-ին, երբ Երևանի թատերական ինստիտուտի երկրորդ կուրսի ուսանող էր: Հոդվածը վերաբերում էր Նաիրի Զարյանի «Արա Գեղեցիկ» ողբերգության՝ Վարդան Աճեմյանի բեմադրությանը Լենինականի դրամատիկական թատրոնում: Առաջնակարգ գրական-դրամատիկական երկ և առաջնակարգ բեմական ստեղծագործություն: Դրական արվեստ և բեմական արվեստ: Այս հոդվածն էլ կարծես կանխորոշեց հեղինակի հետագա գործունեության ուղին՝ նվիրվել գրականությանը և թատրոնին հավասարապես. լինել գրականագետ և թատերագետ, գրական քննադատ և թատերական քննադատ միաժամանակ՝ անջրպետ շտեմսնելով այդ երկու մասնագիտությունների միջև, ինչպես ուրիշ գրականագետ-թատերագետներ՝ ոչ միայն մեր իրականության մեջ: Պատահական չէ, որ նրա առավել ծավալուն և աչքի ընկած աշխատություններից մեկը («Թումանյանի աշխարհը») վերաբերում է գրականությանը, մյուսը՝ թատերական արվեստին («Հայ թատրոնի պատմություն. 1901—1920»):

Իր գրեթե 50-ամյա գործունեության ընթացքում Լևոն Հախվերդյանը լույս է ընծայել շուրջ 30 մեծ ու փոքր գրք-

քեր և հարյուրավոր հողվածներ գրականության, թատրոնի և լեզվի վերաբերյալ (հեղինակի բոլոր հրապարակումները չեն, որ տեղ են գտել այս գրքույկում անխտիր): Իհարկե, այդ գրվածքները հավասարարժեք չեն և ոչ էլ դրանց անսովոր մեծ քանակն է որոշում հեղինակի գրականագիտական-արվեստաբանական նկարագիրն ու կշիռը: Տարբեր նախասիրություններ ունեցող բնավորություն՝ նա գրել է ոչ միայն շատ, այլև արվեստի և գրականության ամենատարբեր երևույթների մասին: Նրա հրապարակած բազմաթիվ հողվածներ, գրախոսականներ ու թատերախոսականներ պատկանում են միայն իրենց հրապարակման ժամանակին: Բայց նա ունի գրքեր ու հողվածներ, որոնք միտք են շարժել ժամանակին, լայն արձագանք են գտել և այսօր էլ արժանի են հիշատակության: Դրանք գնահատել են գրական և թատերագիտական այնպիսի հեղինակություններ, որ մենք նախընտրում ենք այդ գրքերը բնութագրել նրանց վավերական կարծիքներով՝ ըստ ժամանակագրության:

1955-ին լույս տեսավ Լ. Հախվերդյանի առաջին՝ «Մեր օրերի հայ դրամատուրգիան» մենագրությունը (հեղինակի թեկնածուական դիսերտացիան): Այս աշխատության մեջ տրված է հետպատերազմյան հայ թատերագրության ամբողջական պատկերը: Գրքի առավել արժեքավոր կողմը տեսականն է, այն, որ այստեղ կոնֆլիկտը դիտվում է իբրև դրամատուրգիական երկի հիմք և հենարան, իբրև գործողության շարժիչ ուժ, մի բան, որ այնքան էլ հեշտ չէր անել «անկոնֆլիկտ դրամատուրգիայի» տեսության ծաղկման ժամանակներում: Թերևս դա է պատճառը, որ աշխատության մասին լույս տեսավ մի քանի հողված: Դրանցից

մեկը գրել է Ռուբեն Զարյանը. «Զնայած փաստական նյութի առատության, երիտասարդ գրականագետը չի խճճվել փաստերի մեջ, չի իջել էմպիրիկ շարադրանքի մակարդակին: Ընդհանրացնելու ոչ միայն ձգտում ունենալով, այլև տվյալ՝ հեղինակն, ընդհակառակը, հանդես է բերել մասնավորն ու ընդհանուրը միահյուսված վերլուծության մալու ալկնհայտ կարողություն» (սոր գիրք դրամատուրգիայի մասին», Գրական թերթ, 8 ապրիլի 1956):

1959-ին հրատարակվեց «Սուրեն Քոչարյանի արվեստը» աշխատությունը, առաջին գիրքը գեղարվեստական խոսքի նշանավոր վարպետի և առհասարակ ասմունքի արվեստի մասին: Սա Սուրեն Քոչարյանի հայերեն ծրագրերի արվեստաբանական բնութագրությունն է՝ բանավոր խոսքի արվեստի առանձնահատկությունների (հնչերանգ, շեշտ, տեմպ, ութմ, պաուզա) և հնչյունային հայերենի յուրահատկությունների բացահայտումով: Աշխատությունն արժեքավորող գրախոսություններից մեկը գրել էր Գուրգեն Մահարին. «...լ. Հախվերդյանին հաջողվել է իր ընթերցողին դարձնել Սուրեն Քոչարյանի գրական համերգների հանդիսատեսն ու ունկնդիրը... Նա ձանձրացնելու աստիճան եռանդով կպած՝ ականջիդ պատմում ու վեր է հանում տեքստի և ասմունքի մանրամասնություններն այնպիսի ջերմեռանդ հետևողականությամբ, որ ի վերջո դու էլ, ընթերցողդ, անձնատուր ես լինում նրա ոգևորության ալիքներին» («Գիրք Սուրեն Քոչարյանի արվեստի մասին», Գրական թերթ, 20 նոյեմբերի 1959):

Հայտնի բեմադրիչ Վարդան Աճեմյանը մեծ տեղ է գրավում հայ թատերական մշակույթի մեջ իբրև հայ դասական թատերագիրների (Պարոնյան, Սունդուկյան, Շիր-

վանգադե, Վրթ. Փափազյան) երկերի բեմական մեկնաբան: Դա է առանձին արժեք և ազգային բովանդակություն տրվել արվեստագետի ստեղծագործությունը, և հենց դա էլ գրավեց Լ. Հախվերդյանի ուշադրությունը: 1962-ին լույս տեսավ նրա «Կլասիկան և մեր օրերը. Վարդան Աճեմյանի արվեստը» մենագրությունը, ամենից ծավալուն ուսումնասիրությունը, որ գրվել է հայ բեմադրական արվեստի մասին: Իմանալու համար, թե նա ինչպես է արդիական շունչ տվել հայ դասականների գործերին, հայ թատրոնի ապագա գործիչները պետք է դիմեն այս գրքին, որ ամենից լավ բռնութագրել է թատերագետ Լևոն Խալաթյանը. «Գիրքը լի է գրականագիտական ուշագրավ, երբեմն հանդուգն եզրակացություններով, ավելի շուտ այն գրված է թատերագիտականի և գրականագիտականի այնպիսի նուրբ համադրությամբ, որ շատ քչերին կարող է հաջողվել: ...Այս առումով աշխատությունն ունի կրկնակի արժեք՝ գրականագիտական և թատերագիտական, և դժվար է դրանցից որևէ մեկին նախապատվություն տալ: Աճեմյանը գտել է արժանի մեկնաբան, հայ դասական հեղինակները՝ իրենց գնահատողին» («Ռեժիսորի արվեստը», Սովետական արվեստ, 1963, № 12, էջ 45):

Եթե բեմադրական արվեստը (ռեժիսուրան) թատրոնի ամենաբարդ բնագավառն է, ապա դերասանականն ամենից նուրբն է և դժվար բացատրելին: 1967-ին լույս տեսավ «Հայ սովետական թատրոնի պատմություն» մեծածավալ գիրքը, որի դերասանական արվեստին և դերասաններին վերաբերող բոլոր էջերը գրել է Լ. Հախվերդյանը: Թատերագետ Հենրիկ Հովհաննիսյանն այսպես է բնութագրել

ժամանակակից դերասանների ստեղծագործական դիմանրկարները ներկայացնող այդ էջերը. «Անհատականությունների բացահայտման համար ընտրված է մի սկզբունք. բռնել ստեղծագործողի երակը, հայտնաբերել ամենաէականը նրա արտիստական անձնավորության մեջ՝ հիմնավորելու, արդարացնելու համար յուրաքանչյուր կերպավորում: Թատրոնի պատմության մեջ գուցե չկա ավելի հմայիչ ու հետաքրքիր երևույթ, քան այդ պատմության հերոսի՝ դերասանի կերպարն ու ճակատագիրը: Եվ այս գրքում յուրաքանչյուր այդպիսի կերպար ոչ միայն իր տեղն ու իմաստը, այլև իր, միայն իրեն հատուկ հմայքն ունի» («Հայ սովետական թատրոնի պատմություն», Սովետական Հայաստան, 2 դեկտեմբերի 1967):

Թումանյանի սեղծագործությունը Լ. Հախվերդյանին ըզրադնցրել է վաղուց ի վեր: Միանգամից չէ, որ նա հանդերձել է մենագրություն գրել մեծ գրողի մասին: Թումանյանի գրվածքներին նա անդրադարձել է Սուրեն Քոչարյանի ասմունքի մասին գրելու առիթով, զեկուցումներով հանդես է եկել Գրականության ինստիտուտի «Թումանյանական ընթերցումներին», գրել է առանձին հոդվածներ, մինչև որ 1966-ին լույս ընծայեց «Թումանյանի աշխարհը» ծավալուն մենագրությունը (հեղինակի դոկտորական դիսերտացիան): Աշխատության արժանիքներն են. գրողի ստեղծագործության և ապրած ժամանակի, Թումանյանի ստեղծագործության և հայ միջնադարյան գրականության կապերի, նրա հերկերի դրամատիկական էության նորովի բացահայտումները (այստեղ էլ, երևի գրականագետն ու թատերագետը վերստին հանդիպել են միմյանց): Սա, թերևս, հեղինակի առավել ակնառու ներդրումն է մեր գրականագիտու-

թյան մեջ: Չափազանցություն չի լինի ասել, որ այս գիրքն ընդլայնեց Թումանյանի գրաված տեղը հայ հասարակական գիտակցության մեջ, առաջադրեց մի նոր հայացք նրա անձի և ստեղծագործության նկատմամբ: Ըստ երևույթին դա է պատճառը, որ հայտնի գրականագետներ Խորեն Սարգսյանը, Սողոմոն Սողոմոնյանը, Սուրեն Աղաբաբյանը, Նշան Մուրադյանը և ուրիշներ հարկ համարեցին գրել այդ գրքի մասին: Բերենք մի հատված Սողոմոն Սողոմոնյանի գրախոսությունից. «Օգտագործելով Թումանյանի խոստովանությունները («Իմն էն է՝ դրաման», «Ծս դրամա չեմ գրել, բայց ես դրամատուրգ եմ» և այլն), այլև այդ առիթով եղած քննադատական դիտողությունները, գրականագետը տեսականորեն հիմնավորում, բացատրում է, թե որն է Թումանյանի դրամատիզմը: Լ. Հախվերդյանը ցույց է տալիս, որ դրամատիզմը Թումանյանի աշխարհում և՛ աշխարհընկալման եղանակ է, և՛ բովանդակություն, և՛ գաղափարական ուղղություն, և՛ գեղարվեստական դրսևորման ձև» («Նոր խոսք Թումանյանի մասին», Սովետական Հայաստան, 4 նոյեմբերի 1966): Մի քանի տող էլ արձակագիր Հրանտ Մաթևոսյանի հոդվածից. «Լեոն Հախվերդյանը մեզ համար գրել է մենագրություններից դժվարագույնը. Թումանյանը մեր մանկությունն է, իսկ մանկության տարիներին սովորած բառերը չեն ստուգաբանվում: Հախվերդյանն ահա ստուգաբանել է հայացքի ու ընկալման զարմանալի թարմությամբ» («Գիրք Թումանյանի մասին», Հայրենիքի ձայն, 12 փետրվարի 1967):

Լ. Հախվերդյանի գրվածքների ընթերցողը չի կարող նկատած չլինել, որ նա սեեռուն նպատակ ունի գրել պարզ,

մատչելի, գրավիչ, այնպես, որ գիրքը գեղագիտական հա-
ճույք պատճառի ընթերցողին, իր ոճով, ձևով, կառուցված-
քով հրապուրի նրան: Դա է մղել հեղինակին, որ նա իր
գրականագիտական աշխատություններից մի քանիսը գրի
երկխոսության ձևով, իբրև գրույց գրողի և գրականագետի
միջև: Դրանք են՝ «Թումանյանի կյանքը» (1969), «Իսահակ-
յանի կյանքն ու գործը» (1974), «Թումանյանը և իր ժա-
մանակը» (1995): Սրանցից երկրորդը, ինչպես «Թումանյա-
նի աշխարհը», լույս է տեսել նաև Մոսկվայում, ռուսաց լեզ-
վով: Այս գիրքը ներկայացնում է Իսահակյանի հուզական
բովանդակությամբ հագեցած կյանքը՝ ստեղծագործության
գլխավոր շեշտերով: Գրքի մասին գրված բազմաթիվ հոդված-
ներից մեկի հեղինակին, որ գրականագետ Մուշեղ Նարյանն
է, շարադրանքի հենց այդ ձևն է գրավել: «Ու քանի որ գիր-
քը գրված է երկխոսության, կենդանի զրույցի ձևով, զը-
րուցանման վերլուծություն-շարադրանքն էլ ստացել է մի
ինքնօրինակ կենդանություն, փաստերի ու երևույթների մեկ-
նաբանության հաճելի ջերմություն ու մտերմություն: Եր-
բեմն այն պատրանքն էս ստանում, թե ունկնդրում ես Վար-
պետի ու նրա կրտսերագույն ժամանակակցի զրույցը, երբ
մեկը խոսում է մեծավարի, իսկ մյուսը աշխատում է հաս-
կանալ նրան, մասնագիտորեն բացահայտել նրան՝ հիացու-
մի ու լրջմտության շաղախով» («Վարպետի կյանքն ու
գործը», Երեկոյան Երևան, 1 մարտի 1975):

Հայ թատրոնի պատմության ամենահարուստ շրջանն
ընդգրկում է 1901—1920 թվականները, նշանավոր թատե-
րագիրներ Շիրվանզադեի և Լևոն Շանթի, մեծ դերասաններ
Սիրանույշի և Հովհաննես Աբելյանի ստեղծագործության ա-
մենաբեղուն ժամանակները: Երբևէ հատուկ ուսումնասի-

րության առարկա չդարձած այս շրջափուլին է նվիրված Լ. Հախվերդյանի «Հայ թատրոնի պատմություն. 1901—1920» մենագրությունը, որ արժանացավ Հայաստանի պետական մրցանակի: Գիրքն ամենից ավելի բարձր գնահատեց գրականագետ և թատերագետ Գառնիկ Ստեփանյանը, որի հոգվածն ավարտվում է այսպես. «Ամփոփելով գրքից ստացած մեր տպավորությունները, անվարան կարող ենք ասել, որ հրապարակի վրա է դրվել ծանրակշիռ մի հետազոտություն, որն իր մասնագիտական մակարդակով, թատերագիտական հմուտ վերլուծություններով, ընտիր լեզվով և գեղագիտական ընդհանրացումներով նոր խոսք է հայ թատերագիտական մտքի պատմության մեջ» («Ծանրակշիռ հետազոտություն», Հայրենիքի ձայն, 18 մարտի 1981):

Ապրած տարիների և, ինչու՞ չէ, նաև բախտի բերումով (քանի որ դա իսկապես մեծ բախտ է) Լ. Հախվերդյանն անձնական ծանոթություն, շփումներ, նույնիսկ մտերմություն է ունեցել մեր գեղարվեստական մշակույթի մեծերի հետ՝ Ավետիք Իսահակյան, Գուրգեն Մահարի, Վարդան Աճեմյան, Ռուբեն Զարյան, Սուրեն Քոչարյան, Ռաֆայել Իսրայելյան, Պարույր Սևակ: Նրանք հարստացրել են իր կյանքը, խորունկ հետք թողել իր ներաշխարհի ու նկարագրի վրա: Պարույր Սևակի հետ ունեցած տարիների մտերմությունը անդիմադրելի մղում տվեց Լ. Հախվերդյանին ստեղծելու «Պարույրը» խոհագրությունը (էսսե), որ սկսվում է այսպես. «Վաղուց է արդեն ինձ հանգիստ չի տալիս մի միտք, իբրև մարումի կարոտ մի հին պարտամուրհակ՝ թրդթին հանձնելու այն ամենը, ինչ գիտեմ, ինչ կա իմ մտապատկերում Պարույր Սևակի մասին, այն, ինչ մեկ ուրիշը

կարող է և չիմանալ, բանի որ տարբեր են եղել Պարույրի հարաբերությունները տարբեր մարդկանց հետ, և նրանց առաջ նա բացվել է տարբեր շափով ու կերպով: Սա և՛ հուշագրություն է, և՛ բանաստեղծի վերին աստիճանի վառ ու հախուռն ընավորության, նրա բազմաժառ ստեղծագործության մեկնաբանությունը՝ գրված անկեղծ ոգեշնչումով և ստուգապատում գրչով: Գիրքը լույս է տեսել երկու անգամ՝ 1981-ին Բեյրութում, 1987-ին՝ Երևանում: Գրքի մասին լույս տեսած հոդվածներից մեկը պատկանում է Անդրանիկ Մառուկյանին. «Շատ գրված է Պարույր Սեակի մասին ու դեռ շատ կը գրվի: Բայց ոչ մեկ տեղ Պարույրը այնպես հարազատ է ու կենդանի, ապրող ու շնչող, որքան Լևոն Հախվերդյանի այս գրքին մեջ: Գրականագետներ դեռ շատ պիտի վերլուծեն ու տարրալուծեն բանաստեղծին գրականությունը, վեր առնեն անոր գործին այս կամ այն հատկանիշները, բայց ով որ ուզե տեսնել ամբողջական Պարույրը իր իսկությանը մեջ, պիտի դառնա այս գիրքին... Այստեղ Լևոնը չէ, որ կպատմե Պարույրի մասին, այլ Պարույրն է, որ ինքզինք կը հուշե Լևոնին գրչով: Երբ վերջացնենք գիրքը, կրնանք ըսել թե այլևս կը նաճնաճ մարդը և բանաստեղծը, ապրած-մեծացած եք իրեն հետ և հիմա ան կապրի ձեզի հետ, ձեր մեջ» («Վերջին բանաստեղծը պիտի մեռնի վերջին մարդուն հետ», «Նաիրի» շաբաթաթերթ, Բեյրութ, 15 հունվարի 1982):

Այս կենսամատենագիտությունը թերթողը կարող է նրկատել, որ Լ. Հախվերդյանի գրքերն անարձագանք չեն մընացել: Բայց նրա գրվածքներից ոչ մեկը չի ունեցել այնպիսի երջանիկ ճակատագիր, որքան «Զրույցներ լեզվի մասին» գիրքը: Սա երեք հրատարակություն է ունեցել (1982,

1986, 1993), ամենից շատ հողավաճներ այս գրքի մասին են հրապարակվել. լեզվաբանական գրքի, որ կարծես անմիջական կապ չունի գրականագետ և թատերագետ հեղինակի բուն մասնագիտությունների հետ: Առերևույթ, այո՛, ըստ էության՝ ունի: Այստեղ շատ տվյալներ են ի մի եկել, որ ունեցել է հեղինակը. տասնյակ տարիներ հայերեն շարադրելու փորձը, թատրոններում հնչող բանավոր հայերենի՝ բեմական խոսքի ունկնդրի փորձը, վերջապես, թարգմանչի փորձը (նա թարգմանել է երեք անգամ հրատարակված «Հին Հունաստանի լեզենդներն ու առասպելները», Ստեֆան Յվայգի «Մարդկության աստեղային ժամերը», Սունդուկյանի անվան թատրոնում և այլուր բեմադրված մի շարք պիեսներ): Այս ամենի համադրության արդյունքն է այս գիրքը, որ կարդացվում է թեթև ու անճիգ, բայց ստեղծվել է տարիների տքնաջան աշխատանքով: Շատ ժամանակ է պիտք եղել հեղինակին, որպեսզի արդի գրավոր և բանավոր հայերենում ի հայտ բերի լեզվական այնպիսի իրողություններ, որոնք չէին դիտվել ու բնութագրվել: Զրույցների ամենից ուշագրավ էջերը վերաբերում են հայերենի ոճի, հայեցի լեզվամտածողության հարցերին: Այս գիրքը հեղինակի ներդրումն է կիրառական լեզվաբանության մեջ, որ հարստացնում է մեր պատկերացումը ժամանակակից հայերենի վերաբերյալ, նպաստում մայրենի լեզվի յուրացմանը, հայերեն գրավոր և, մանավանդ, բանավոր խոսքը հյուսելու դժվար արվեստին: Գրքի հենց այս հատկանիշն է, որ շեշտվել է լույս տեսած գրախոսականներում. «...հեղինակի կամքից անկախ, ստացվել է մի տեսակ «Հայոց լեզվի դասագիրք» հայերեն խոսող ու գրող բոլոր տարիքի մարդկանց

համար: Անպաճույճ ոճով, բայց լեզվագիտական ստույգ սկզբունքներով գրված այս դասագիրքը մեծ, անգնահատելի գործ է կատարելու, սովորեցնելու է ոչ միայն ճիշտ, այլև լավ, գեղեցիկ խոսել ու գրել, ուստիև՝ ճիշտ մտածել» (Զարդանդ Դարյան. «Գիրք զարմանալի» կամ «Ինչպես լուրջալ բառերի ծովում», Գրական թերթ, 14 հունվարի 1983), «...գրքում ստեղծվում է ներդաշնակ հավասարակշռություն ինչպես իմացականի ու դաստիարակչականի, այնպես էլ գիտականի ու գեղարվեստականի, տեսականի ու գործնականի միջև: ...Կարևոր է, որ մեր ուսուցիչ-ուսուցչուհիները, ձեռքի տակ ունենալով Լևոն Հախվերդյանի մտքի ու սրտի թելերով հյուսված այս գիրքը, գեղեցիկի աշխարհը հրապուրեն իրենց սաներին, կրթեն նրանց միտքն ու հոգին» (Մայա Ավագյան. «Գիրք, որ դասագիրք արժե», Սովետական Հայաստան, 24 օգոստոսի 1986): «Զրույցների» անհրաժեշտության շառավիղը շատ ընդարձակ է: Գրախոսն ունի այն տպավորությունն ու համոզմունքը, թե այս գիրքը վերահորատարակվելու է յոթ տարին մեկ և այնպիսի քանակով, որ ամեն մի հայ ընթերցող, պատանի լինի թե մեծահասակ, ունենա իր սեփական օրինակը, որովհետև լիովին արժանի է սեղանի գիրք լինելու» (Ռուբեն Զարյան. «Սեղանի գիրք», Երեկոյան Երևան, 18 փետրվարի 1987): Հայոց լեզվին նըվիրված այս գիրքն ավելի բաղմերանգ դարձրեց հեղինակի մասնագիտական նկարագիրը: Ժամանակակից գիտությունը պահանջում է մի կողմից խիստ մասնագիտացում (գիֆերենցիացիա), մյուս կողմից գիտության տարբեր ճյուղերի մերձեցում (ինտեգրացիա): Ըստ երևույթին, Լ. Հախվերդյանն այս երկրորդ ուղղության հետևորդն է: Այս դեպքում խոս-

քը վերաբերում է գրականագիտության, թատերագիտության և լեզվաբանության մերձեցմանը:

Ինչևէ, Լեոն Հախվերդյանի զուտ գիտական (գրականագիտական և արվեստաբանական) վաստակը դասական գրքողներինց Թումանյանի և Իսահակյանի ստեղծագործության, ժամանակակից գրողներինց և արվեստագետներինց՝ Սուրեն Քոչարյանի, Վարդան Աճեմյանի, Գուրգեն Մահարու, Հրանտ Մաթևոսյանի, Պարույր Սևակի ստեղծագործության մեկնաբանությունն է: Այս ասպարեզներում է, որ նա ասել է ինքնուրույն և ինքնատիպ, քիչ թե շատ մնայուն արժեքներ կայացնող խոսք:

Ամբողջական չի լինի Լ. Հախվերդյանի գրեթե կեսդարյա գործունեության պատկերը, եթե աչքի առաջ չունենանք նրա մանկավարժական և վարչական աշխատանքը նույնպես: 1980-ից նա Գեղարվեստաթատերական ինստիտուտի սիրված ու գնահատված դասախոսն է: Շատ տարիներ (1965-ից) Արվեստի ինստիտուտի թատրոնի բաժնի վարիչն է: Այդ տարիներին բաժնում ստեղծվել և հրատարակվել են թատերագիտական մի ամբողջ շարք ծանրակշիռ աշխատություններ («Հայ սովետական թատրոնի պատմությունը», «Հայ թատրոնի տարեգրություն» 3-րդ հատորը, «Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության» երկու հատորը, «Թատրոնը միջնադարյան Հայաստանում», «Հայ հին դրաման և նրա պայմանաձևերը», «Հայ թատրոնի պատմություն. 1901—1920» և այլ գրքեր):

1987-ի աշնանն Արվեստի ինստիտուտի երկարամյա տնօրեն Ռուբեն Զարյանը, տարիքի բերումով, թողնց իր պաշտոնը: Նրա խորհրդով այդ պաշտոնը վարելու թեկնածու առաջադրվեց Լ. Հախվերդյանը: Թեկնածուն ընտրվեց,

և նա 1987-ի հոկտեմբերի 1-ից Արվեստի ինստիտուտի տնօրենն է: 1988-ի փետրվարին նա հանդես եկավ «Արվեստի ինստիտուտի այսօրվա վիճակը և անելիքները վերակառուցման ճանապարհին» ընդարձակ ղեկուցմամբ, որ ներկայացնում էր հայ արվեստաբանության զարգացման մի լայն ծրագիր: Բայց դրան հաջորդեցին այնպիսի իրողություններ, որոնք տակնուվրա արեցին հանրապետության տնտեսական և հասարակական կյանքը: Ճիշտ է, 1988-ին Խալիլայում տեղի ունեցավ հայ արվեստին նվիրված 5-րդ միջազգային մեծ գիտաժողովը, 1989-ին Թբիլիսիում կայացավ հայ-վրացական մշակութային կապերին նվիրված միջհանրապետական կոնֆերանս, բայց դրանք Արվեստի ինստիտուտի վերջին մեծ նախաձեռնումները եղան: Դրանցից հետո, հայտնի պատճառներով, նման ծավալուն և մեծածախս գիտաժողովներ կայացնելու մասին խոսք լինել չէր կարող (ծրագրված էր 1992-ին Երևանում հրավիրել հայ արվեստին նվիրված 6-րդ միջազգային գիտաժողովը, որ չկայացավ): Ինստիտուտի ղեկավարությանը մնում էր անել հնարավորը հայ արվեստաբանության ներուժը պահպանելու, ինստիտուտը երիտասարդ կարող ուժերով համալրելու, արվեստաբանության լավ ավանդները շարունակելու համար: Ստեղծված դժվարին պայմաններում այդ նրպատակներին է հետամուտ ինստիտուտի ղեկավարությունը:

1. Հախվերդյանը ղեկուցումներ է կարդացել կամ ելույթներ է ունեցել 1950-ից ի վեր Հայաստանում կայացած գրողների և թատերական գործիչների բոլոր համագումարներում, բանախոսություններով հանդես է եկել Հայաստանի և հայ սփյուռքի կրթական և մշակութային հաստատու-

թյուններում (Կալկաթա, Բեյրութ, Հալեպ, Կահիրե, Մոնրեալ, Միլան, Լոս Անջելես, Բոստոն, Նյու Յորք և այլն)։ Բանավոր խոսքն ակնառու տեղ է գրավում նրա գործունեության մեջ*։

Գուցե և ի վնաս զուտ գիտական աշխատանքի և ակադեմիական նկարագրի, նա չի եղել կաբինետային մասնագետ. խառնվածքի թելադրանքով միջամուխ է եղել երկրի քաղաքական կյանքին, հատկապես վերջին տասնամյակում, երբ հայ իրականությունը ենթարկվեց երևակայությունից դուրս ալեկոծությունների, և ժողովուրդը զգում էր մտավորական

* Լ. Հախվերդյանի գործունեության պատկերը լրիվ չի լինի, եթե չնշվեն նրա աշխատանքները, որոնք չեն տպագրվել (ուստիս տեղ չեն գտել մատենագիտության մեջ), բայց տեղ են գրավում նրա ստեղծագործական կենսագրության մեջ։ Նշենք դրանցից առավել կարևորները.

«Թումանյանի կյանքը» կինոսցենար, 1968, նկարահանել է կինոբեմադրիչ Վիլեն Զաքարյանը, ցուցադրվել է 1969-ին Մոսկվայի և Երևանի հեռատեսիլով։

«Ավետիք Իսահայան. էջեր բանաստեղծի կյանքից» կինոսցենար, 1975, նկարահանել է կինոբեմադրիչ Հովիկ Հախվերդյանը, ցուցադրվել է 1975-ին Երևանի հեռատեսիլով։

«Զրույցներ լեզվի մասին» հեռուստատեսային հաղորդաշար լեզվաբան Մայա Ավագյանի հետ միասին, ցուցադրվել է շարունակաբար՝ երկշաբաթյա պարբերականությամբ 1977 և 1978 թվականներին։

Վ. Դեմարի «Հիշիր վաղվա օրդ» պիեսի թարգմանությունը. բեմադրվել է 1971-ին Սունդուկյանի անվան թատրոնում։

Վ. Սարգսի և է. Մորոյի «Մազամ Սան-ժեն» պիեսի թարգմանությունը. բեմադրվել է 1972-ին Սունդուկյանի անվան թատրոնում։

Մ. Պանյոյի «Տոպալ» պիեսի թարգմանությունը. բեմադրվել է 1974-ին Սունդուկյանի անվան թատրոնում։

Պ. Շաֆերի «Մթին պատմություն» պիեսի թարգմանությունը. բեմադրվել է 1974-ին Երևանի դրամատիկական թատրոնում։

Ա. Յագարևու «Խանում» պիեսի թարգմանությունը. բեմադրվել է 1990-ին Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնում։

մարդկանց խոսքի կարիքը: Եվ գրականագետը հանդես եկավ քաղաքական-հրապարակախոսական հոդվածներով («Ինչ պետք չէ անել», «Ինչու՞ ճիշտը չասել», «Մենք ինչքա՞ն կարող ենք մեղ վնասել», «Զե՛մ ուզում», «Որտեղ է ապրել այս «ազրեսոր» ժողովուրդը» և այլն), արժարժեքով ժողովրդի համար կենսական կարևորություն ունեցող խնդիրներ: Իր գրավոր և բանավոր ելույթներով, առանց ղգուշամտության, նա մասնակից է եղել հասարակական կարծիք ստեղծելու գործին ամեն դեպքում, երբ ղգացել է դրա կարևորությունը:

Գիտական և հասարակական գործունեության այս համագրությունն է որոշում Լևոն Հախվերդյանի, իբրև հայ գրականության և արվեստի մեղվաջան մշակի, նկարագիրը:

Բաճասիրտական գիտությունների թեկնածու՝
Խ. Ե. ՍԱՄՎԵԼՅԱՆ

ОСНОВНЫЕ ДАТЫ ЖИЗНИ И ДЕЯТЕЛЬНОСТИ
АКАДЕМИКА НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ
НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЛЕВОНА ОГАНЕСОВИЧА АХВЕРДЯНА

Левон Оганесович Ахвердян родился 26 декабря 1924 года в Караклесе (Ванадзор), в семье военного.

1928 г. С семьей переселяется в Ереван.

1941 г. Окончил Ереванскую среднюю школу имени Х. Абовяна.

1946 г. Награжден медалью «За доблестный труд в Великой Отечественной войне 1941—1945 гг.».

1949 г. Окончил театроведческий факультет Ереванского театрального института.

1949—1953 гг. Заведующий отделом критики редакции газеты «Гракан терт».

С 1950 г. Член Союза писателей Армении.

С 1951 г. Член Театрального общества Армении.

1954—1955 гг. Редактор Госиздата («Айпетрат»).

С 1955 г. Член редакционной коллегии журнала «Советакан арвест».

1955—1959 гг. Ответственный секретарь журнала «Советакан арвест».

1956 г. Присуждена ученая степень кандидата филологических наук (диссертация—книга «Армянская драматургия наших дней»).

1956—1958 гг. Научный сотрудник Сектора теории и истории искусств Академии наук Армении.

С 1965 г. Заведующий отделом театра Института искусств АН Армении.

1967 г. Присуждена ученая степень доктора филологических наук (диссертация—книга «Мир Туманяна»).

1968—1969 гг. Секретарь правительственной комиссии по празднованию 100-летнего юбилея Ов. Туманяна.

- 1972 г. Удостоен почетного звания «Заслуженный деятель искусств Армении».
- 1975 г. Награжден Почетной грамотой Президиума Верховного Совета Армянской ССР в связи с 50-летием со дня рождения. — Секретарь правительственной комиссии по празднованию 100-летнего юбилея Ав. Исаакяна.
- С 1980 г. Преполагает в Ереванском художественно-театральном институте.
- 1981 г. Приглашен в «Айказян колледж» в Бейруте в качестве преподавателя армянской литературы.
- 1983 г. Удостоен Государственной премии Армении (за книгу «История армянского театра. 1901—1920»).
- С 1987 г. Директор Института искусств АН АрмССР.
- 1988 г. Заместитель руководителя армянской делегации на пятом международном научном симпозиуме, посвященном армянскому искусству, в Италии.
- 1989 г. Удостоен премии имени Мик. Налбандяна Союза писателей Армении (за книгу «Паруйр»).
- Руководитель армянской делегации на конференции, посвященной армяно-грузинским культурным связям, в Тбилиси.
- 1990 г. Член-корреспондент НАН Армении.
- НАН Армении командирован в США по приглашению международной канцелярии по изучению и обмену «Айрекс».
- 1994 г. Член правительственной комиссии по празднованию 125-летних юбилеев Ов. Туманяна и Комитаса.
- Вновь избран членом правления Союза писателей Армении.
- С 1994 г. Член бюро отделения гуманитарных наук НАН Армении.
- 1995 г. Член Высшего совета армянского языка при инспекции языка РА.
- 1996 г. Академик НАН Армении.

КРАТКИЙ ОЧЕРК ЖИЗНИ, НАУЧНОЙ И ОБЩЕСТВЕННОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

Левон Ахвердян первую свою статью опубликовал в 1946 году, будучи студентом второго курса Ереванского театрального института. Это была статья о постановке трагедии Напри Заряна «Ара Прекрасный», осуществленной Варданом Аджемяном в Ленинаканском драматическом театре. Первокласное литературно-драматическое произведение и первокласный спектакль. Литература и искусство. Статья словно предопределила направление дальнейшей деятельности автора, посвятившего себя литературе и театру в равной мере, ставшего литературоведом и театроведом, литературным и театральным критиком одновременно, не признающего разницы между этими двумя специальностями. Не случайно одна из его двух наиболее крупных работ («Мир Туманяна») посвящена литературе, другая («История армянского театра. 1901—1920») — сценическому искусству.



За свою почти 50-летнюю деятельность Левон Ахвердян опубликовал множество больших и малых книг и сотни статей по вопросам литературы, театра. Не все публикации нашли место в настоящей книжке. Конечно, статьи эти не равноценны и не их необычно большое количество определяет литературоведческо-искус-

ствоведческий вес автора. Часть этих работ принадлежала только своему времени. Но многие его книги и статьи возбуждали мысль, делали погоду в литературоведении и искусствоведении, находили широкий резонанс. Эти труды не потеряли своего значения и сегодня. На них откликнулись и их оценили такие авторитетные специалисты, что характеризовать работы Ахвердяна можно также выдержками из отзывов признанных авторитетов в хронологическом порядке.

В 1955 году вышла в свет монография Л. Ахвердяна «Армянская драматургия наших дней» (кандидатская диссертация). В этом труде дана целостная картина послевоенной армянской драматической литературы. Наиболее ценная часть книги—теоретическая: конфликт здесь рассматривается как основа драматургического произведения, как движущая сила действия—обстоятельство, заслуживающее особого признания, если учесть, что делалось это во времена расцвета «теории» бесконфликтности в драматургии. «Несмотря на обилие фактического материала,—писал Рубен Зарян,—молодой литературовед не запутался в фактах, избежав опасности эмпирического изложения. Стремясь к обобщениям, он проявляет умение анализировать частное и общее в органическом единстве» («Гракан терт», 8 апреля 1956 г.).

В 1959 году была издана работа «Искусство Сурена Кочаряна», первая книга о выдающемся мастере художественного слова и вообще об искусстве художественного чтения. Это искусствоведческое исследование об армянских программах Сурена Кочаряна, выявляющее особенности искусства устного слова (тембр, интонация, темп, ритм, пауза), вообще звучащего армянского слова. В своей рецензии на книгу Гурген Мари писал: «...Л. Ахвердяну удалось сделать своего чи-

тателя зрителем и слушателем литературных концертов Сурена Кочаряна... С редкой энергией и увлеченностью он раскрывает перед тобой подробности текста и искусства художественного чтения, делая это с такой горячей настойчивостью, что в конце концов и ты, читатель, отдаешься этим волнам авторского воодушевления» («Гракан терт», 20 ноября 1959 г.).

Известный режиссер Вардан Аджемян занимает важное место в армянской театральной культуре, как сценический интерпретатор произведений армянских драматургов-классиков (Паронян, Сундукян, Ширванзаде, Врт. Папазян), что придает особую ценность и национальное содержание творчеству этого художника. Это и привлекло внимание Л. Ахвердяна. В 1962 году вышла в свет его монография «Классика и наши дни. Искусство Вардана Аджемяна» — наиболее обширное у нас исследование об армянском сценическом искусстве. Театровед Левон Халатян писал: «В книге немало интересных, порой дерзких суждений. Она написана с таким тонким сопоставлением театроведческой и литературоведческой мысли, которое мало кому удастся... В этом смысле труд имеет двойную ценность: литературоведческую и театроведческую, и трудно отдать предпочтение какой-нибудь из них. Аджемян нашел достойного истолкователя, а армянская классика — такого же ценителя» («Советакан арвест», 1963, № 12, с. 45).

Если постановочное искусство (режиссура) — самая сложная область театра, то актерское искусство — наиболее тонкое и труднообъяснимое. В 1967 году увидела свет большая книга «История армянского советского театра», все страницы об актерах и актерском искусстве которой написаны Л. Ахвердяном. Театровед Генрих Ованесян так охарактеризовал эти творческие портреты современных актеров: «Для выявления индивидуальностей избран принцип: выяснить самое су-

шественное в актерской личности, чтобы затем объяснить каждую воплощенную актером роль. В истории театра, может быть, нет ничего более увлекательного и интересного, чем образ и судьба героя этой истории—актера. И в этой книге каждый такой образ имеет не только свое место и смысл, но и свое, присущее только ему, обаяние» («Советакан Айастан», 2 декабря 1967 г.).

Творчество Туманяна занимало Л. Ахвердяна давно. Не сразу он решился написать монографию о великом поэте. К произведениям Туманяна он обращался в связи с искусством устного слова Сурена Кочаряна или когда выступал с докладами на «Туманяновских чтениях» в Институте литературы, писал отдельные статьи. И только в 1966 году он издал обширную монографию «Мир Туманяна» (докторская диссертация). В ней по-новому раскрыты деятельность и время писателя, связи творчества Туманяна со средневековой армянской литературой, драматическая сущность его произведений (здесь снова сошлись литературовед и театровед). Это, пожалуй, самый весомый вклад автора в наше литературоведение. Не будет преувеличением сказать, что книга расширила представление о месте Туманяна в армянском общественном сознании, предложила новый взгляд на его личность и творчество. Вероятно, этим объясняется тот факт, что об этой книге писали известные литературоведы Хорен Саркисян, Согомон Согомонян, Сурен Агабабян, Ншан Мурадян и другие. Приведем отрывок из рецензии Согомона Согомоняна: «Используя признания Туманяна («Я не писал драм, но я драматург» и др.), как и высказывания критики на этот счет, литературовед теоретически обосновывает и объясняет сущность туманяновского драматизма. Л. Ахвердян показывает, что драматизм в мире

Туманяна это и способ мировосприятия, и содержание, и идейное направление, и форма художественного выражения» («Советакан Айастан», 4 ноября 1966 г.). А вот еще фрагмент из статьи прозаика Гранта Матевосяна: «Левон Ахвердян написал для нас труднейшую из монографий. Туманян—это наше детство, а слова, усвоенные в детстве, не этимологизируются. А Ахвердян вот этимологизировал с удивительной свежестью взгляда и восприятия» («Айреники дзайн», 12 февраля 1967 г.).

Тот, кто читал Л. Ахвердяна, не мог не заметить его постоянного стремления писать просто, доходчиво, занимательно. Так, чтобы книга доставляла эстетическое наслаждение читателю, чтобы своим стилем, формой, построением привлекала его. Это и побудило автора некоторые свои работы облечь в форму диалога, беседы писателя и литературоведа. Здесь должны быть названы: «Жизнь Туманяна» (1969), «Жизнь и дело Исаакяна» (1974), «Туманян и его время» (1995). Вторым из этих трудов (так же, как «Мир Туманяна») был издан в Москве, на русском языке. Книга об Исаакяне рассказывает о насыщенной эмоциональным содержанием жизни поэта с выделением главных моментов его творчества. «...Поскольку книга написана в форме диалога, живой беседы,—отмечал Мушег Нарян,—диалогический анализ-изложение и получает какую-то особую живость, а интерпретация фактов и явлений—привлекательную теплоту и интимность. Порой возникает иллюзия, что слушаешь беседу Мастера и его самого младшего современника, когда первый говорит как взрослый, а второй старается понять и профессионально объяснить его со смешанным чувством любви и вдумчивого восхищения» («Ерекоян Ереван», 1 марта 1975 г.).

Наиболее богатый период истории армянского театра приходится на 1901—1920 годы, лучшее время

творческой деятельности знаменитых драматургов Ширванзаде и Левона Шанта, великих актеров Сирануйш и Ованеса Абеяна. Этому периоду, никогда не ставшему предметом специального исследования, посвящена монография Л. Ахвердяна «История армянского театра. 1901—1920», которая была удостоена Государственной премии Армении. Книгу высоко оценил литературовед и театровед Гарник Степанян, статья которого заканчивается так: «Подводя итоги нашему впечатлению от книги, можем с уверенностью сказать, что появилось значительное исследование, которое по своему профессиональному уровню, отличному театроведческому анализу, изысканному языку и эстетическим обобщениям является новым словом в истории армянской театроведческой мысли» («Айреники дзайн», 16 марта 1981 г.).

Благодаря счастливому стечению жизненных обстоятельств Л. Ахвердян был лично знаком, общался и даже был близок с такими выдающимися деятелями нашей художественной культуры, как Аветик Исаакян, Гурген Маари, Вардан Аджемян, Рубен Зарян, Сурен Кочарян, Рафаэл Ибрагьян, Паруйр Савак. Они обогатили его жизнь, оставили глубокий след в его внутреннем мире и облике. Долгая близость с Паруйром Севаком вызвала у Л. Ахвердяна желание рассказать об этом незаурядном человеке. Было написано эссе «Паруйр», начинающееся так: «Давно уже мне не дает покоя мысль, словно ждущий погашения старый вексель, доверить бумаге все, что знаю, что живо в моей памяти о Паруйре Севаке, то, что кто-то другой может и не знать, поскольку у Паруйра были разные отношения с разными людьми и перед ними он раскрывался в разной степени и по-разному». Это и воспоминания, и объяснение необычайно яркого, отчаянного характера по-

эта, его многогранного творчества, написанные правдивым пером и с настоящим вдохновением. Книга была издана дважды: в 1981 году в Бейруте и в 1987—в Ереване. Одна из статей о книге принадлежит Андранику Царукяну: «О Паруйре Севаке написано много и еще много будет написано. Но нигде Паруйр не кажется таким близким и родным, нигде он так не живет и не дышит, как в этой книге Левона Ахвердяна. Литературоведы еще долго будут разбирать и анализировать написанное поэтом, выявлять те или иные особенности его творчества, но кто хочет видеть подлинного Паруйра, должен обратиться к этой книге.

...Кончив книгу, вы можете сказать, что *узнали* человека и поэта, что выросли и возмужали вместе с ним и что теперь он живет с вами, среди вас» (еженедельник «Наири», Бейрут, 15 января 1982 г.).

Читающий этот биографический очерк заметит, что книги Л. Ахвердяна всегда находили отклик у общечеловечности. Но из всего написанного им ничто не имело такой счастливой судьбы, как «Беседы о языке». Три раза издавалась эта книга (1982, 1986, 1993), книга языковедческая, которая, казалось бы, не имеет непосредственной связи с литературоведческой и театроведческой профессиями автора. Внешне, возможно так, но по существу эта связь налицо. Тут скрестилось много слагаемых: многолетний опыт Л. Ахвердяна излагать свои мысли по-армянски, придавая особое значение качеству слова и стилю изложения, его опыт внимательного и взыскательного слушателя звучащей с театральных подмостков сценической речи, наконец, опыт переводчика (он перевел неоднократно переиздававшуюся у нас книгу «Мифы и легенды Древней Греции», «Звездные часы человечества» Стефана Цвейга, целый ряд пьес, поставленных в театре имени Сундукяна и других театрах). Сочетание всего этого и поро-

